**Արձանագրություն N 9**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**

**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**Երկիր**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 08 մայիսի 2026թ.

**Ընթացակարգ**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

**Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**Ծրագրի անվանումը**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**Նիստին մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ա. Առուշանյանը, Մ. Բաբայանը և Ա. Սերգոյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Մրցույթի փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.**

---

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հրավերի հայտարարության վերաբերյալ 06.05.2026թ. ստացվել են հարցադրումներ և դրանց վերաբերյալ 08.05.2026թ. տրամադրվել պարզաբանում՝

**Հարց 1** «Մասնակցի որակավորումը սույն չափանիշով կհամարվի բավարար, եթե այն համապատասխանում է սույն ենթակետով սահմանված պայմաններին և պահանջներին:

Մասնագիտական անձնակազմի առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկվող թիմում ընդգրկված փորձագետների կողմից ստորագրված գրավոր համաձայնությունները՝ ծառայությունների մատուցման ընթացքում նրանց ներգրավվածությունը հաստատելու վերաբերյալ, ինչպես նաև՝

անձնագրերի և որակավորումը հաստատող փաստաթղթերի (դիպլոմ, վկայական, ատեստատ, լիցենզիա, թույլտվություն, անձնագիր) պատճենները: Նման փաստաթղթերը կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Փորձագետների ինքնակենսագրականները (CV)»:

ԵՄ Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգերի (GDPR) պահանջներից ելնելով՝ մենք չենք կարող ներկայացնել անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի պատճեններ, քանի որ դրանք պարունակում են զգայուն անձնական տվյալներ:

Կինդրենք տեղեկացնել՝ արդյոք հնարավոր է որպես փոխարինող ընդունել այլ տեսակի փաստաթուղթ, թե՞ բավարար կլինի ներկայացնել միայն փորձագետների CV-ները, որակավորումը հաստատող փաստաթղթերը և ստորագրված համաձայնությունները:

**Պարզաբանում 1** Կարող եք ուղղորդվել Ձեր օրենսդրությամբ, տրամադրելով Ձեր կողմից առաջարկվող այլ տեսակի փաստաթուղթ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի IV-րդ բաժնի 26-րդ կետի 6)-րդ ենթակետով սահմանվում է.

«6) գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների.»

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման օրը՝ 01.06.2026թ. ժամը 16:00–ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ___ | Տ. Քանքանյան |
| անդամներ | ___ | Ա. Սիմոնյան |
| | ___ | Ա. Առուշանյան |
| | ___ | Մ. Բաբայան |
| | ___ | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | ___ | Ա. Սարգսյան |